

ան կ'ուզէր ըսել որ հաւատացեալը կրնար հասնիլ կատարելութեան այդ բարձր աստիճանաչափին՝ եթէ միայն փորձէր ձգտիլ հոգեւոր եւ բարոյական հասունութեան:

Յիսնակի Պահոց այս շրջանը հաւատացեալը կը հրաւիրէ լրջօրէն խորհրդածելու այս բնաբանին շուրջ, «Եղերուք կատարեալք որպէս եւ Երկնաւոր Հայրն ձեր կատարեալ է», որպէսզի այդ կատարելութեամբ դիմաւորենք Ծնունդը Աստուածորդուն, մարդկութեան տրուած մեծագոյն պարգեւը: Կատարեալ մարդը կ'ապրի Աստուծոյ կամքին համաձայն եւ մէկ բան կրնայ փճացնել իր նկարագիրը, որովհետեւ ինչպէս Պօղոս Առաքեալ կ'ըսէ, «Կատարեալ մարդը պէտք է ըլլայ Աստուծոյ տաճարն ու բնակարանը»: Երբ մենք կատարեալ ենք՝ այն ատեն միայն կ'ըլլանք Աստուածանման, եւ այս շնշանակէր որ մենք մեր հինգ զգայարանքները պիտի գործածենք տեսնելու աշխարհիկ ճշմարտութիւնները միայն, այլ միաժամանակ պարտինք օգտագործել մեր հոգեկան կարողութիւնները, որպէսզի հոգեպէս հասունցած, լաւագոյնս ապրինք նախ՝ իբրեւ Աստուածահաճոյ անձեր ապա իբրեւ իրա՛ւ հետեւորդները մեր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի:

**Ն.Ա.Մ.**

## ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Նոր Տարուան իրա՛ւ իմաստը այն չէ որ մենք ունենանք նոր տարի մը, այլ աւելի որ մենք ունենանք նոր հոգի, նոր ողնայար, նոր աչքեր եւ նոր ականջներ:

Ահա, հին տարին անցնող 12 ամիսներու ծանր բեռան տակ սկսած է քայքայուիլ, մինչ անդին գալիք տարին դուրս կու գայ իր պատեանէն:

Ահա կը բանանք գիրք մը, որուն էջերը պարապ են: Մենք է որ բառերը պիտի շարենք հոն: Գիրքը կը կոչուի «Առիթներ» եւ անոր առաջին գլուխը Նոր Տարուան օրն է:

Ուզենք կամ չուզենք Ամանորը մեզի կը բերէ նոր մարտահրաւէրներ, անոնցմէ օգտուինք կամ ոչ, ան անպայման կը բերէ նոր պատեհութիւններ:

Նման տարիքին, Նոր Տարին եւս լոկ թիւ մըն է:

Երիտասարդութեանս սորվեցայ թէ ամէն ինչ երկու կողմեր ունէր, եւ որոշեցի թէ ես միշտ պայծառ կողմը պիտի տեսնէի, թէ կարողութեանս չափով մօտ պիտի ըլլայի Աստուծոյ, եւ իր տեսանկիւնէն նայէի իրերուն: Որքան կը նայիմ աշխարհին այդքան աւելի կը համոզուիմ թէ բաւականին լոյս կայ ամենուր մեր ճամբուն վրայ: Ի վերջոյ առողջ եւ բարօր մնալու ճշգրիտ եւ միակ ճամբան մեր հոգիի լոյսն է:

Հին Տարուան վարդը ահա կը թառամի, մինչ անդին նոր կողմեր կը սկսի ծաղկիլ:

Միակ որոշում մը առած եմ զոր կը փորձեմ պահել, այդ ալ մանր հաշիւներէ վեր մնալն է: